

## ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### ՆԱԹԵԼԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1921 թ. ապրիլի 2-ին բոլշևիկյան ուժերի հրամանատար Մ. Վելիկա-նովը Երևանը գրավելու մասին հերթական հրամանն արձակեց՝ պահանջելով գործել վճռականորեն և լինել համառ՝ հակառակորդի զորքերը Երևանից բաց չթողնելու նպատակով<sup>1</sup>: Երևանի շրջակայքում մղած թեժ կռիվներից հետո՝ 1921 թ. ապրիլի 2-ին, 11-րդ բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները Քանաքեռի և Աշտարակի կողմից մտան Երևան, իսկ ապրիլի 3-ին Կարմիր բանակի հեծելազորը գրավեց Էջմիածինը<sup>2</sup>: Ապրիլի 4-ին Երևան մտան Վեդի-Ղամարլու շրջանում 45-օրյա մարտեր մղած խորհրդային բանակի զորամասերը:

Ապրիլի 2-ի կեսօրին Փրկության կոմիտեի անդամներն ու զորքը հեռացան քաղաքից: Տասնյակ հազարավոր բնակիչներն արդեն Բաշ-Գառնիի ճանապարհին էին: «Չայաստանի արևը փախչում էր Արարատյան դաշտից դեպի արևմուտք»<sup>3</sup>, - գրում է Ս. Վրացյանը: Երևանում երիտասարդ չէր մնացել: «Ձավթիչները» Քանաքեռի բարձունքներից վախվորած մտան ամայի փողոցները, ուր նրանց նույնպես վախեցած դիմավորեցին պարսից հյուսատոսը, ամերիկացի բժիշկը և ամենայն հայոց բանաստեղծը: Պահը պատկերավոր է նկարագրում Ս. Վրացյանը. «Ժողովուրդը ահասարսուռ լուռ էր... Երբեք ոչ մի տեղ հաղթական մի բանակ այսպիսի անփառունակ մուտք չի ունեցել իր նվաճած քաղաքը...»<sup>4</sup>:

Ինչպես փետրվարի 18-ին ապստամբները, մտնելով Երևան, առաջին հերթին գրավեցին բանտերը, ուր բռնափակված էին դաշնակցության բազմաթիվ գործիչներ ու համակիրներ. այս անգամ էլ կոմունիստների գլխավորած զորամասերը Երևան մտնելուն պես սկսեցին գրավել բանտերը, որտեղ բանտարկված էին Փրկության կոմիտեի՝ կարճատև իշխանության օրոք ձերբակալված կոմունիստները և նրանց համակիրները, որոնց թիվը, ի դեպ, չէր զիջում հունվար-փետրվարին Չեկայի կողմից բանտեր նետվածների թվին<sup>5</sup>: Ձերբակալված կոմունիստները դաշնակցականների նման նույնպես պահվում էին բանտային հեղձուցիչ պայմաններում. բանտախցերի դռները երբեմն օրերով չէին բացվում<sup>6</sup>: Ղամարլուի ճակատում գերի ընկած և բանտ նետված Նապոլեոն Անդրիասյանը իր հուշերում գրում է, որ բանտախուցը այնքան մեղ էր,

<sup>1</sup> Տե՛ս «Освободительная миссия 11-й Красной армии» // ԲՀԱ, Եր., 1980, թիվ 2, էջ 53:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 296, թ. 1:

<sup>3</sup> Ս. Վրացյան, Չայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի մեջ, Եր., 1993, էջ 580:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 338, թ. 1:

<sup>6</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 39, թ. 5:

որ բանտարկյալները հերթով էին քնուն հատակին<sup>7</sup>:

Ա. Սիմոնյանը արխիվային նյութերով փաստել է, որ 1921 թ. մարտի 5-ի դրությամբ Երևանի կենտրոնական բանտում կար շուրջ ութ հարյուր, իսկ գինվորական բանտերում՝ վեց հարյուր բանտարկյալ: Լեփ-լեցուն էին նաև Աշտարակի, Էջմիածնի, Կոտայքի, Ախտալի, Նոր Բայազետի բանտերը<sup>8</sup>:

Փրկության կոմիտեի արտակարգ դատարանի նախագահ Արծրունին, որը մարտի 19-ին փոխարինեց Ավ. Օհանջանյանին, մարտի 25-ին Ս. Վրացյանից բանավոր կարգադրություն ստացավ առավել ակտիվ կոմունիստներին շտապ հանել բանտերից ու տեղափոխել Բաշ-Գառնի: Նույն օրը կենտրոնական բանտից դուրս բերվեցին հիսուներկու, իսկ գինվորական բանտից տասնմեկ «դավաճան» ու «մարդասպան» բանտարկյալներ ու հարյուր հիսուն հոգանոց պահակազորի ուղեկցությամբ քշվեցին Բաշ-Գառնու ուղղությամբ: Այս խումբը համալրվեց ևս երեսուներեք գերիներով:

Պահակախմբերը ղեկավարում էր Անդրանիկ Կարապետյանը՝ օգնականներ ունենալով Կ. Կարապետյանին և Վարդանին: Բանտարկյալ-պատանդները Բաշ-Գառնիում մնացին վեց օր՝ ենթարկվելով ամեն տեսակի զրկանքների<sup>9</sup>:

«Կոմունիստ» թերթում հետևյալ նկարագրությանն ենք հանդիպում. «Ծաղրն ու ծանակն այն աստիճանի էին հասնում, որ եթե բանտարկյալներից մեկն ու մեկը ծարավից տանջված ցանկանում էր քիչ ձյուն վերցնել, թույլ չէին տալիս և որպես հրամաններ չկատարողների, թակում էին հրացանի կոթով»<sup>10</sup>: Որքան էլ չափազանցված լինի այս վկայությունը, այնուամենայնիվ մեկ բան ակնհայտ է. դաշնակցականները ևս բուլշևիկների նման անմարդկային էին վերաբերվում ձերբակալվածներին:

Կարմիր բանակի՝ գերիների նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի մասին Ս. Վելիկանովը գրում էր. «Երբ մեր զորքերը ապրիլի 14-ի լույս 15-ի գիշերը գրավեցին Քեշիշքենդը, պարզվեց, որ գերի կարմիր գինվորներից երեսուն հոգի մեռել են քաղցից և դաշնակների դաժան վերաբերմունքից»<sup>11</sup>: Իսկ ավելի ուշ Ձանգեզուրում թույլ տրվեց նոր դաժանություն. գնդակահարվեցին կամ Տաթևի ժայռից ցած նետվեցին այստեղ բերված 78 գերի կոմունիստները և կարմիրբանակայինները:

Չետագայում Չայրենիքի փրկության կոմիտեի անդամները այս ոճրագործության համար փորձել են արդարանալ՝ մեղքը բարդելով մեկը մյուսի վրա: Թեև Ս. Վրացյանը շարունակ պնդում էր, որ իրենք լավ են վերաբերվել ռազմագերիներին, այնուամենայնիվ ստիպված էր խոստովանել, որ, հակառակ Չայրենիքի փրկության կոմիտեի կամքի, ռազմագերիների նկատմամբ մի քանի դատապարտելի դեպքեր են արձանագրվել՝ Ա. Օհանջանյանի կարգադրությամբ. «Սարսափելի բան է քաղաքացիական կռիւը, ոչ թե տաշեղներ, այլ մարդկային գլուխներ են թռչում դէս ու դէն: Եւ

<sup>7</sup> Տե՛ս **Амирханян III**. Из истории борьбы за советскую власть в Армении. Ер., 1967, էջ 130:

<sup>8</sup> Տե՛ս **Ա. Սիմոնյան**, Ձանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Եր., 2000, էջ 442-443:

<sup>9</sup> Տե՛ս ՅԱԱ, ֆ. 1021, ց. 4, գ. 39, թթ. 4, 5, գ. 75, ց. 4:

<sup>10</sup> «Կոմունիստ», 28 ապրիլի, 1921:

<sup>11</sup> Նույն տեղում, 20 ապրիլի, 1921:

անկարելի է դատել՝ ո՞վ է արդար, ո՞վ է մեղաւոր: Չորի հետ թացն էլ է այրում»<sup>12</sup>:

Ավետիս Օհանջանյանն էլ իր հերթին 1921 թ. հոկտեմբերի 31-ին Թավրիզում դաշնակցական ժողովներից մեկի ժամանակ խիստ քննադատում է Ռուբեն Տեր-Մինասյանին՝ պնդելով, որ վերջինս է իրեն կարգադրել բոլոր ձերբակալվածներին ցած նետել Տաթևի ժայռից: Այնուհետև հավելում է, որ ձերբակալվածների իննսուն տոկոսը ամենդ էր: «Մենք միմիստրներ չէինք,- շարունակում է Ա. Օհանջանյանը,- այլ մարդասպան, կողոպտիչներ ու ժողովրդին կործանողներ»<sup>13</sup>:

Կարծում ենք՝ ամենևին էլ էական չէ, թե կոնկրետ ում հրամանով են գերեվարված կոմունիստները ցած նետվել. եղելությունը ինքնին զազրելի, ոչ մի արդարացում չունեցող ոճրագործություն էր ու թերևս ապստամբության ամենածանր հետևանքներից մեկը: Չմոռանանք, որ դաշնակցականները հենց բոլշևիկների կողմից իրականացվող նման զազրելի արարքներին վերջ դնելու համար էին ելել պայքարի (համենայն դեպս իրենք այդպես էին պնդում), իսկ հիմա արդեն իրենք էին իրականացնում նմանատիպ վայրագություններ, որոնցից տուժողը կրկին հայ մարդն էր:

Նախքան պարտություն կրած ապստամբների զանգվածային նահանջը կոմիտեն Բաշ-Փառնիում պահեստավորեց որոշակի քանակությամբ պարեն, զինամթերք, դեղորայք, ինչպես նաև Երևանից այնտեղ մեկնեց մտավորականության մի մասը: Ռազմական գործողությունները արագ ընթացան: Ախտայի ճակատը քայքայվեց, և ապրիլի 2-ին կատարվեց անխուսափելի նահանջ Երևանից<sup>14</sup>:

Մայրաքաղաք Երևանից, գավառական կենտրոններից ու գյուղերից ավելի քան տասը հազար տղամարդ (և բավական թվով կանայք) բռնեցին տարագրության ճամփան՝ Բաշ-Փառնիով դեպի Ջանգեզուր, դեպի ազատ և անկախ Լեռնահայաստան<sup>15</sup>:

Ջանգեզուր գնացին Յովհ. Քաջազնունին, Ս. Վրացյանը, Ն. Աղբալյանը, ճարտարապետ Ալ. Թամանյանը, գրող Լեռ Կամսարը և հազարավոր ուրիշ մտավորականներ: Երևանը թողնելուց հետո՝ ապրիլի 3-ին, Բաշ-Փառնիում և Խարաբա-Քյոթունլուում կենտրոնացան չորս ճակատներում գործող զինվորական ուժերը և մտավորական գործիչներ՝ մոտ ութ հազար մարդ:

Բոլշևիկներն իրենց ուժերը կենտրոնացրին Բաշ - Փառնիի մերձակայքում, ուր ապրիլի 6-ին տեղի ունեցավ ամենակատաղի մարտերից մեկը: Ըստ Կ. Սասունու՝ կռվի ընթացքում բոլշևիկները մի պահ խուճապի մատնվեցին և անգամ քիչ էր մնում թողնեին Երևանը: Բայց հոգնած գյուղացիները, չունենալով այլևս ռազմամթերքի անհրաժեշտ պաշար, լքեցին Բաշ-Փառնին ևս<sup>16</sup>:

<sup>12</sup> **Ս. Վրացյան**, Կեանքի ուղիներում, դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. 2, Պեյրոս, 1967, էջ 124:

<sup>13</sup> **Վ. Ղազախեցյան**, Նժդեհը Ջանգեզուրում. 1920 թ. վերջ-1921 թ. հուլիս, Եր., 2001, էջ 74:

<sup>14</sup> Տե՛ս «Ասլան Ստեփանեանի յուշերը», Թեհրան, 1966, էջ 393:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>16</sup> Տե՛ս **Կ. Սասունի**, նշվ. աշխ., էջ 230:

Բաշ-Գառնիից նահանջողներին մտահոգում էր մեկ հարց. ինչպե՞ս անել, որ Նախիջևանի և Բոյուք-Վեդիի կողմից չկտրվի նահանջողների ճանապարհը: Նահանջից առաջ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ որոշվեց, որ Կ. Սասունին ստանձնի թիկունքը պահելու խնդիրը և առաջապահ ուժերով բռնի Բոյուք-Վեդիի և Նախիջևանի բարձունքները:

Խորհրդակցությունը նման որոշում կայացրեց՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ սասունցիներն ու մշեցիները քաջածանոթ էին տեղանքին: Համաձայն սահմանված կարգի՝ սկզբից պետք է անցնեին Սասունի, Վասպուրականի, Տարոնի ուժերը՝ Սմբատի, Մուշեղի և Ասլանի գլխավորությամբ: Կ. Սասունու առաջապահ ուժերը Դարալագյազի Այնձոր գյուղում հանդիպեցին Յապոնի ժողովրդական վաշտերին: Այդ նույն ժամանակ նահանջողները հասան Քեշիշքենդ (Եղեգնաձոր), որտեղ էին Փրկության կոմիտեի անդամները, դրանց թվում՝ Ռ. Տեր-Մինասյանը:

Երևանի գրավման օրերին, երբ փախստականների հոսանքը շարժվեց դեպի Բաշ-Գառնի, մյուս ուղղությամբ մեծ թվով մարդիկ դիմեցին դեպի Մարգարայի կամուրջ՝ թուրքերին հանձնվելու համար: Թուրքերը, իհարկե, նրանց չընդունեցին, ուստի նրանք ստիպված վերադարձան ու բարձրացան Արագած լեռան լանջերը<sup>17</sup>: Արագածում հավաքվածները մի քանի օրվա թեթև, բայց անիմաստ բախումներից հետո ցրվեցին իրենց գյուղերը:

Հայրենիքի փրկության կոմիտեն հասցրեց իր հետ վերցնել կառավարական արխիվների մի փոքր մասը, իսկ մյուս փաստաթղթերը մնացին Երևանում և հետագայում համալրեցին Խորհրդային Հայաստանի արխիվային ֆոնդերը: Փրկության կոմիտեն իր հետ տարավ նաև պետական գանձարանը:

Ս. Վրացյանն այդ արարքը բացատրում է հետևյալ կերպ. «Փետրվարի 18-ի ապստամբության հետևանքով Երևանից նահանջելիս բոլշևիկները պետական գանձը լցրել էին սնդուկների մեջ՝ իրենց հետ տանելու նպատակով, բայց հաջողվել էր տանել այդ սնդուկների մի մասը, մնացածն ընկել էր Փրկության կոմիտեի ձեռքը: Այդ արկղերը մնացել էին պետական գանձարանում չբացված՝ մինչև Ջանգեզուր նահանջի նախօրյակին հատուկ հանձնաժողովի միջոցով դրանք հաշվառվել էին և տարվել զինվորական ջոկատի հսկողությամբ»<sup>18</sup>:

Փրկության կոմիտեի ձեռքում կար Երևանից տարված արժույթի երեք տեսակ՝ հայկական դրամանիշներ ու չեկեր, խորհրդային ռուբլիներ, մեկ արկղ ոսկյա իրեր, տարադրամներ՝ դոլար, ֆունտ-ստեռլինգ, ֆրանկ, պարսկական շռան, գերմանական մարկ և այլն<sup>19</sup>:

Միանգամայն իրավացի է Ա. Սիմոնյանը, որ Փրկության կոմիտեն գոնե բարոյական իրավունք չունեի քայքայված ու սոված երկրից դուրս բերելու վերջին միջոցները<sup>20</sup>:

Դաշնակցականների կողմից հայկական գանձերի դուրսբերման հար-

<sup>17</sup> Տե՛ս **Իրազեկ**, Մօտիկ անցեալից, պատմական դեպքեր և ապրումներ, 1917-1922, Պեյրոթ, 1956, էջ 108:

<sup>18</sup> **Ս. Վրացյան**, Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի մեջ, էջ 628-629:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 628-632:

<sup>20</sup> Տե՛ս **Ա. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 445:

ցին անդրադարձել է նաև Անդրանիկը, որի կարծիքով՝ դաշնակցականները իրենց հետ տարել են նաև արտասահմանից իր անունով ուղարկված դրամական միջոցները. «խոստանալով այդ գանձը վերադարձնել, երբ «խորհրդային Յայաստանն ըլլար նաև «իրենց» պետութիւնը»<sup>21</sup>:

Դաշնակցական գործիչներից մեկը հետագայում արդարացիորեն գրում էր. «Անհասկանալի է, թե կառավարությունը ինչու չի հանձնել դրամները նոր կազմակերպված իշխանություններին՝ որպես ժողովրդի սեփականություն: Եկող ուժերին էին թշնամի համարում, ժողովուրդը հո՞մ մնում էր ու պիտի լիներ բոլոր ժամանակներում, բոլոր ռեժիմի կառավարությունների օրոք»<sup>22</sup>:

«Կոմունիստ» թերթը հիշեցնում էր, որ այդ միլիոնավոր դոլարների և այլ գումարների մեծ մասը փոխառության ձևով արտասահմանի տարբեր երկրների հայ գաղթօջախներում դեռևս 1920 թ. ամռանը հավաքված են եղել Հայաստանի սահմաններում ապրող ժողովրդի տագնապը մեղմելու համար, երկիրը վերաշինելու նպատակով, ուստի «այդ թալանը մեղմացուցիչ ոչ մի հանգամանք չունեցող ոճիր է»: Թերթը գտնում էր, որ պետք է «մի հատուկ լիազոր պատգամավորություն ուղարկել արտասահման և մեր այնտեղի ընկերների, բազմաթիվ բարեկամների և այլ մասաների միջոցով վերադարձնել տառապող ժողովրդի անունով կատարված փոխառությունների հսկայական գումարը»<sup>23</sup>:

Արտասահման անցնելուց հետո Փրկության կոմիտեի անդամները կառավարության այդ քայլը փորձեցին արդարացնել այսպես. եթե իրենք Երևանից հանած չլինեին տարադրամը և մյուս արժեքները, ապա Պարսկաստան անցած մի քանի հազար հայերն անկասկած սովամահ կլինեին: Այս պատճառաբանությունը ոչ մի կերպ չի մեղմում դաշնակցականների արարքը. չէ՞ որ Հայաստանում մնացել էին ոչ թե մի քանի հազար, այլ յոթուսեց հարյուր հազար հայեր, որոնց գերակշիռ մասը գտնվում էր ծայրահեղ աղքատության և թշվառության մեջ:

Ավելին, այդ ամենը հետագայում տնօրինեցին ընդամենը մի փոքր խումբ մարդիկ: Եվ բնավ պատահական չէ, որ այդ առթիվ լուրջ դժգոհություններ ծագեցին ոչ միայն գաղթականության, այլև շարքային դաշնակցականների շրջանում: Հանրությանը ներկայացրած կիսատ-պռատ հաշվետվությունը ոչ մի կերպ չկարողացավ հանգստացնել կրքերը Սփյուռքում<sup>24</sup>:

Այսպիսով, Երևանի գրավումով Փետրվարյան ապստամբությունը պարտություն կրեց: Պարտություն, որն անխուսափելի էր: Ապստամբության համար հեռանկար չէին տեսնում նաև դրա ղեկավարները: «Եթե բոլշևիկները ուժեղանան արտաքին օժանդակությամբ, իսկ մենք մնանք մենակ,-գրում է Ս. Վրացյանը,-պարտությունը անկասկած է ու անխուսափելի»<sup>25</sup>:

Ահա, թե ինչ է գրում ապստամբության պարտության պատճառների

<sup>21</sup> **Ա. Ժամկոչեան**, Զօրաւար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 56:

<sup>22</sup> «Կոմունիստ», 12 մայիսի, 1921:

<sup>23</sup> Նույն տեղում, 12 մայիսի, 1921:

<sup>24</sup> Տե՛ս **Ա. Սիմոնյան**, նշվ.աշխ., էջ 446:

<sup>25</sup> **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 656:

մասին Գ. Սարգիսբեկյանը. «Մեր անյաջողութեան պատճառներից գլխաւորը Վրաստանի անկումն էր, որ հոգեբանօրէն շատ ծանր ազդեց մեր ժողովուրդի եւ կռուողների վրայ: Մենք մեզ զգում էինք կղզիացած ու մինակ, երբ մեր դէմ կանգնած էր հսկայ եւ լայնածաւալ Ռուսաստանը: Մեր ժողովուրդի և զօրքի մէջ կատարուեց խոշոր բեկում, կռուի թափն ընկաւ և ապստամբութիւնը իր իմաստը կորցրեց:

Երկրորդ՝ փորձուած հրամանատարական կազմի կատարեալ բացակայութիւնն էր: Սպայութեան աքսորով մեր երկիրը զրկուել էր լաւ ռազմականօրէն պատրաստուած ու գործին գիտակ զինուորականներից: ... Գլխավոր պատճառներից մէկն էլ պետք է նկատել այն, որ մենք չունէինք կանոնաւոր զինուորական կարգապահութեան և դաստիարակութեան բովից անցած և մարզուած զօրք: Կռուի ամբողջ ծանրութիւնը ընկած էր անմարզ ժողովրդի վրայ, թէւ նա կռում էր հրաշալիօրէն»<sup>26</sup>:

Ուշագրաւ են դաշնակցության հայտնի գործիչ Զովի. Քաջագունու բավականին օբյեկտիւ դատողությունները շարժման պարտության վերաբերյալ. «Ապստամբության պարտությունը կանխորոշված էր և անխուսափելի (մանավանդ Վրաստանի խորհրդայնացումից հետո), երբ ապստամբությունը իր իսկ ներսում կրում էր արդեն պարտություն, որովհետև հավատ չունէր հաջողության»<sup>27</sup>:

Երևանի գրավման օրը՝ ապրիլի 2-ին՝ ժամը 18-ին, բուլշևիկները բուլոնին հայտարարեցին, որ քաղաքն արդեն իրենց ձեռքում է, իսկ դաշնակցականները խայտառակ ձևով փախել են<sup>28</sup>: Իսկ հաջորդը օրը խորհրդային իշխանությունը հրաման է արձակում, որի համաձայն՝ երկրում տապալվում է Զայրենիքի փրկության կոմիտեի իշխանությունը, և վերականգնվում է խորհրդային իշխանությունը: Զրամանի համաձայն չեղյալ են հայտարարվում Փրկության կոմիտեի արձակած բուլոնը հրամաններն ու սահմանած օրենքները<sup>29</sup>:

Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները արձագանք գտան Մոսկվայում. Լենինն անձամբ իր ձեռքն առավ Կովկասի գործերի կարգավորումը: Մոսկվայի կառավարությունը փոխեց Հայաստանի նախկին Զեդկոնը և հատուկ հանձնարարությամբ Հայաստան ուղարկեց Ալ. Մյասնիկյանին:

Ալ. Մյասնիկյանը իր հետ բերեց Լենինի մամակը, որում Կովկասի դեկավարներին կոչ էր արվում հաշվի առնել երկրի առանձնահատկությունները և գործել դրանց համապատասխան: «Աւելի մեղմութիւն, զգուշութիւն, զիջողութիւն, դէպի մանր բուժուագիւտ, մտաւորականութիւնը, ու հատկապէս գիւղացիութիւնը»<sup>30</sup>:

Այս մամակը, անշուշտ, արդյունք էր Ռուսաստանի ընդհանուր պայմանների, բայց Այսրկովկասին վերաբերող հատվածը թելադրված էր հիմ-

<sup>26</sup> «Գարեգին Սարգիսբեկեանի պատմածը» (գրի առաւ Արշակ Սեիրապեանը), «Զայրենիք» ամսագիր, Բոստոն, 1968, թիւ 2, էջ 19:

<sup>27</sup> Զովի. Քաջագունի, ԳՅ Դաշնակցությունը անելիք չունէր այլևս, Եր., 1994, էջ 52:

<sup>28</sup> Տե՛ս ԶԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 347, թ. 1, նաև՝ ց. 8, գ. 295, թ. 1:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 113, ց. 1, գ. 1, թ. 2:

<sup>30</sup> ԶԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 31, թթ. 140, 141, Գ. Լազեան, Հայաստանը և Հայ Դատը, Եր., 1991, էջ 280-281:

նականում Հայաստանի փետրվարյան ապստամբության թողած տպավորությամբ: Սա թերևս կարելի է համարել փետրվարյան ապստամբության դրական նշանակություններից մեկը, քանի որ Լենինի նամակից հետո ու Ալ. Մյասնիկյանի ժամանումով Հայաստանում կիրառվեց համենատաքար մեղմ քաղաքականություն: Սա նշանակում է, որ ապստամբությունը Մոսկվայի կենտրոնական իշխանություններին ստիպեց լրջորեն մտախոզվել Հայաստանում տիրող իրավիճակով:

Այս առումով համամիտ չենք պրոֆ. Վ. Ղազախեցյանի այն պնդմանը, որ մեղմ քաղաքականությունը ոչ թե փետրվարյան ապստամբության դասերից ու արդյունքներից էր, այլ նոր գործելակերպ, որ որդեգրեց Ռուսաստանի բոլշևիկների կուսակցությունը իր 10-րդ համագումարում (1921 թ. մարտ): «Այնպես որ,- գրում է նա,- առանց փետրվարի 18-ի էլ Հայաստանում անցում էր կատարվելու մեղմ քաղաքականության, չնայած չի կարելի ժխտել փետրվարյան դասերի հնարավոր, բայց ոչ էական նշանակությունը Լենինի՝ ապրիլի 14-ի նամակի հայտնության մեջ»<sup>31</sup>: Ինչպես արդեն նշեցինք, Լենինի նամակի Այսրկովկասին վերաբերող մասը մեծապես պայմանավորված էր Հայաստանի փետրվարյան ապստամբության թողած տպավորությամբ: Կարծում ենք՝ ակնհայտ է, որ բոլշևիկները հասկացել էին իրենց սխալները, որոնց վերացմանն էին ուղղված նրանց հետագա քայլերը:

Ամենևին էլ պատահական չէ, որ հենց ապրիլի 3-ին Ս. Կասյանը Գ. Օրջոնիկիձեին հուշում էր. «Անհրաժեշտ է միանգամից սահմանել խելացի գործելակերպ, վերջ դնել քյալլագյոզությանը: Հարկավոր է վերակազմավորել Կենտկոմը և Յեդկոմը»<sup>32</sup>: Իսկ ապրիլի 4-ի պատասխան հեռագրում Օրջոնիկիձեն նշում էր, որ անհրաժեշտ է հայտարարել ավելի լայն համաճեղում և հաստատել լիբերալ վարչակարգ<sup>33</sup>:

Եվ ահա ապրիլի 10-ին ընդունվեց ներման մասին առաջին դեկրետը, որում նշված էր, որ խաղաղ աշխատավորական կյանքի բարեկարգման, դաշնակցական ավերված երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման և «ծաղկող սոցիալիստական հայրենիք» ստեղծելու համար անհրաժեշտ է, որ բոլորը նվիրվեն «շինարար ստեղծագործ աշխատանքի»: Խորհրդային Հայաստանի հեղափոխական կոմիտեն այս շինարար աշխատանքին լծվելու է հրավիրում ոչ միայն բոլշևիկներին, այլ նաև նրանց դեմ ակտիվ կռվողներին: «ՀՍԽՀ Ռազմահեղափոխական կոմիտեն, իբրև երկրի աշխատավոր մասսաների կառավարություն, չի կարող լինել ոխակալ, չի կարող ղեկավարվել վրեժի զգացումով: ...Բանվորագյուղացիական կառավարությունը մեծահոգի է դեպի այն բոլոր մոլորյալները, որոնք ենթարկվել են հանցավոր ագիտացիայի, վախի և փոքրոգության»<sup>34</sup>: Սույն դեկրետը չէր տարածվում Հայրենիքի փրկության կոմիտեի անդամների, արտակարգ դատարանի աշխատակիցների, բարձր հրամանատարական կազմի և խմբապետերի վրա: Ներման դեկրետը չտվեց ակնկալվող

<sup>31</sup> Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 85:

<sup>32</sup> Тапрян И. 11-я Красная Армия в борьбе за установление и упрочение Советской власти в Армении. Ер., 1971, с. 274–275.

<sup>33</sup> ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 1, թ. 2:

<sup>34</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 4, գ. 85, թ. 4:

արդյունքը. բոլշևիկներից ահասարսուռ փախչողներից ոչ ոք հետ չդարձավ Երևան:

Ապրիլի 17-ին Մոսկվայում և Թիֆլիսում կուտակված մի խումբ հայ կոմունիստների հետ Դիլիջանով Երևան եկավ Գ. Օրջոնիկիձեն, որը հանգամանորեն ծանոթացավ Հայաստանում փետրվարյան ապստամբությունից հետո ստեղծված վիճակին: Երկու օր հետո՝ ապրիլի 19-ին, նա ՌԿ(բ)Կ ու Խորհրդային կառավարության անունից Ելույթ ունեցավ բազմամարդ նիստում, որտեղ ողջունեց «Երիտասարդ Կարմիր Հայաստանին», խստորեն քննադատեց Ալեքսանդրապոլի դաշնագիրը, որով օրինականացվել էր թուրքերի կողմից հայկական տարածքների բռնազավթումը: Այնուհետև նկատեց, որ նման արտակարգ պայմաններում Հայաստանի կոմկուսը դավաճան կլիներ, եթե ղեկը իր ձեռքը չվերցներ: «Կուսակցությունը և Խորհրդային Ռուսաստանը Հայաստան էր եկել ոչ թե տանջված ու հյուժված երկրի անկախությունը խլելու, այլ բոլոր միջոցներով ու ուժերով ապահովելու ժողովրդի անվտանգությունը»<sup>35</sup>:

Գ. Օրջոնիկիձեն ափսոսանք հայտնեց, որ Երևանից ու Արարատյան դաշտից Ջանգեզուրի ճանապարհին էին բռնել նաև մեծ թվով աշխատավոր մարդիկ, հատկապես՝ մտավորականներ: «Հայ մտավորականությունը պետք է մնար իր ժողովրդի հետ, թող հայ մտավորականությունը ամոթով չմնար իր ժողովրդի առաջ... Հայ մտավորականությունը տրեխավոր գյուղացու և աշխատավոր բանվորի զավակն է: Նա հանցավոր կլինի, եթե չգա ծառայելու նրա բանվորագյուղացիական իշխանությանը»<sup>36</sup>, - ասում էր իր Ելույթում Գ. Օրջոնիկիձեն:

Ապրիլի 20-ին Գ. Օրջոնիկիձեն, Հայիեդկոմի ղեկավարները, 11-րդ կարմիր բանակի հրամանատար Ա. Չեկկերը, Վրաստանի հեդկոմի անդամ Էլիավան և ուրիշ նշանավոր բոլշևիկ գործիչներ գնացին Երևանի կենտրոնական բանտ:

Երևանը բոլշևիկների կողմից գրավվելուց հետո բանտերը երրորդ անգամ լցվել էին հայ մարդկանցով: Կալանքից ազատված կոմունիստների և նրանց համակիրների տեղը այս անգամ բռնել էին դաշնակցականներն ու նրանց համակիրները, ապստամբության գործուն մասնակիցները, որոնց թիվը Հայաստանում հասավ մոտ հազարի: Միանգամայն համաձայն ենք Ա. Սիմոնյանի այն կարծիքի հետ, որ եթե չլիներ զանգվածային փախուստը դեպի Ջանգեզուր, ապա այդ թիվն անհամեմատ ավելի մեծ կլիներ<sup>37</sup>:

Չենց բանտի դռան առջև կայացավ մի նոր միտինգ, որտեղ կրկին ճառով հանդես եկավ Գ. Օրջոնիկիձեն, որը խիստ քննադատեց Ա. Կասյանի գլխավորած Հայաստանի բոլշևիկյան նախկին կառավարությունը, որը հաշվի չէր առել երկրի իրավիճակն ու առանձնահատկությունները, թույլ էր տվել կոպիտ սխալներ, կատարել էր անկիրթ ու անօրինական քայլեր և դրանով իսկ նպաստել ապստամբության առաջացմանը:

Նույն օրը՝ ապրիլի 20-ին, Հայիեդկոմը, Հայկոմկուսի կենտկոմի անդամների, Օրջոնիկիձեի և Էլիավայի մասնակցությամբ քննության առավ

<sup>35</sup> «Կոմունիստ», ապրիլի 22, 1921:

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> Տե՛ս Ա. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 448:



Հայաստանից արքայական և Ռուսաստանի զանազան բանտերում ու ճամբարներում պահվող Հայաստանի բանակի նախկին սպաների հարցը և ընդունեց հետևյալ որոշումը. «Հայկական բանակի բոլոր նախկին սպաներին ազատել լազերներից ու արգելման այլ վայրերից, լիակատար ազատություն տալ նրանց, իսկ նրանց Հայաստան վերադառնալու հարցը թողնել բաց՝ մինչև քաղաքացիական կռիվների վերջը»<sup>38</sup>: Իսկ երկու օր անց՝ ապրիլի 22-ին, Մոսկվայից լուր ստացվեց այն մասին, որ նախկին հայկական բանակի արքայական սպաներին թույլատրվում է վերադառնալ հայրենիք<sup>39</sup>:

Ապրիլի 25-ին հրապարակվեց ներման նոր դեկրետ, որը տարածվեց Երևանից գաղթածների վրա՝ բացի Փրկության կոմիտեի անդամներից, իսկ երեք օր հետո երրորդ դեկրետը ներում շնորհեց նաև նրանց<sup>40</sup>:

Ապրիլի 24-ին ներման հրամանագրով<sup>41</sup> Թավրիզ գնաց Գ. Վարդանյանը՝ Պարսկաստանում ապաստանած տարագիրներին համոզելու և հետ բերելու նպատակով: Բայց սարսափն ու վախը դեպի բոլշևիկներն ու նրանց իշխանությունն այնքան զորավոր էին զանգվածների մեջ, որ քչերը միայն քաջություն ունեցան վերադառնալու, այն էլ՝ դժվարությամբ<sup>42</sup>:

Հայիեդկոմի ներման դեկրետները և Գ. Օրջոնիկիձեի քայլերը խոսում են փետրվարյան ապստամբության սթափեցնող ազդեցության մասին: Բացի ներման մասին դեկրետներից, ընդունվեցին նաև տնտեսական կյանքը կարգավորող բազում դեկրետներ<sup>43</sup>: Այսպես, ապրիլի 21-ի դեկրետով արգելվեցին ամեն տեսակի բռնագրավումներն ու խուզարկությունները<sup>44</sup>:

Ընդհանրացնելով ասենք՝ քանի որ Փետրվարյան ապստամբությունը ունեցել է և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ, ուստի այն չենք կարող միանշանակ գնահատել:

Ապստամբության դրական նշանակությունները հետևյալն են.

- Փետրվարյան ապստամբության շնորհիվ բանտերից ազատվեցին պետական, հասարակական, քաղաքական, մտավորական գործիչներ, մարտական առաջնորդներ, ուսանողներ, որոնք փրկվեցին վերահաս մահից:

- Փետրվարյան ապստամբությունը նպաստեց, որ խորհրդային իշխանությունները ձեռնամուխ լինեն հայկական բանակի արքայական սպաներին ազատ արձակելու և նրանց Հայաստան վերադարձնելու գործին: Եվ շուտով իշխանությունների ձեռնարկած քայլերը տվեցին իրենց արդյունքները. արդեն մայիսին ազատ արձակվեց ու արքայից Հայաստան վերադարձավ սպաների մեծ մասը:

- Հայությունը փրկվեց Հայիեդկոմի որդեգրած կործանարար քաղաքացիությունից: Թե՛ Մոսկվայում, թե՛ Երևանում բոլշևիկյան իշխանավորներ-

<sup>38</sup> «Կոմունիստ», 1921, ապրիլի 24:

<sup>39</sup> Տե՛ս նույն տեղը, մայիսի 7:

<sup>40</sup> Տե՛ս **Վ. Մինախորեան**, Վերադարձ, «Հայրենիք» ամսագիր, 1924, թիվ 6, էջ 48:

<sup>41</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25, թ. 108:

<sup>42</sup> Տե՛ս **Իրազեկ**, նշվ. աշխ., էջ 109:

<sup>43</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1253, ց. 1, գ. 3, թթ. 14, 18, 20, 21, 25, նաև գ. 4, թթ. 9, 101:

<sup>44</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1253, ց. 1, գ. 9, թթ. 1, 2, 3, 4, 5:

րը դառնը դաս առան, Խորհրդային Հայաստանի ոչ կոմունիստ տարրերի նկատմամբ սկսեցին վարել հանդուրժողական քաղաքականություն, դադարեցին բռնագրավումները, մտավորականության նկատմամբ բացահայտ անվստահությունը փոխարինվեց նրան սիրաշահելու և հոգատարության գործելաճով:

- Փետրվարյան ապստամբությունը սթափեցնող ազդեցություն ունեցավ Խորհրդային իշխանությունների վրա. նրանց ստիպեց առավել զգուշորեն իրականացնել իրենց քաղաքականությունը Հայաստանում: Հատկանշական է այն, որ 1921 թ. մայիսին ժամանելով Հայաստան՝ Ալ. Մյասնիկյանը իր առաջին հրապարակային-ծրագրային ելույթում հայտարարեց, որ Հայաստանը ծանր դրությունից դուրս կգա այն դեպքում, երբ չի հակառակվի աշխատավորականների կամքին. «Դաշնակցության ավանտյուրան պետք է դաս լինի բոլոր նրանց համար, ովքեր դեռ մտածում են հակառակություն ցույց տալ աշխատավորության կամքին»<sup>45</sup>:

- Ի վերջո, դրական նշանակություններից էր նաև այն, որ Խորհրդային իշխանության վերահաստատումից հետո քայլեր ձեռնարկվեցին Հայաստանում գտնվող ռուսական զորամասերի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ մեղմելու համար: Ապրիլի 21-ի հատուկ հրամանով զորամասերից պահանջվում էր այնպիսի քաղաքականություն ու վերաբերմունք ցուցաբերել, որ բնակչությունը հարգանքով լցվի Կարմիր բանակի հանդեպ: Իսկ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր «վերջ տալ անպատկառությանը, օգնել գյուղացիներին դաշտային աշխատանքներում, չվիրավորել բնակչության կրոնական ու ազգային զգացմունքները»<sup>46</sup>:

Ապստամբության բացասական հետևանքները.

- Առանց այդ էլ ծայրահեղորեն քայքայված երկրում եղան նոր ավերածություններ:

- Ինչպես ապստամբության ընթացքում, այնպես էլ նրա ավարտից հետո եղան բազում մարդկային զոհեր:

- Երկրից հեռացավ բնակչության սերունդը՝ մտավորականությունը՝ իր հետ տանելով գիտելիքների մեծ պաշար, որը, անշուշտ, խիստ անհրաժեշտ էր Հայաստանին:

- Ապստամբ գաղթականները իրենց հետ տարան նաև Հայաստանի պետական գանձերը՝ ավելի բարդացնելով սովյալ բնակչության վիճակը: Բացի դրանից, պետական գանձերի հետ նրանք տարել էին նաև Հայաստանի արխիվի մի մասը և թանկարժեք ու ոսկյա իրեր, որոնք ոչ միայն նյութական, այլ նաև մշակութային արժեքներ էին:

- Դեպի Ջանգեզուր շտապող փախստականները վիատեցրին Սյունիքի պաշտպաններին, իսկ դա ունեցավ ավերիչ հետևանքներ:

Ամենևին էլ պատահական չէր, որ դեռևս 1921 թ. ապրիլի 17-ին Վայոց ձորի Ազգային Խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը Գնդեվազից ուղարկած նամակում տազնապ էր հայտնում Ջանգեզուրի բնակչության նկատմամբ երևանյան գաղթականության, մտավորականության և հատ-

<sup>45</sup> Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Եր., 1957, էջ 337:

<sup>46</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 307, թթ. 1, 3:

կապես զորքի կազմալուծիչ հետևանքների կապակցությամբ: Ուշագրավ է, որ Նժդեհը ևս համամիտ էր Եղիշե Իշխանյանի կարծիքին: Այսպես, ԶԶ նախարարական խորհրդին և կուսակցական դատարանին ներկայացրած բացատրագրերում 1921 թ. օգոստոսին Նժդեհը, հանգամանորեն վերլուծելով Ջանգեզուրի պարտության պատճառները, հիմնականում մատնանշել է այն բացասական հետևանքները, որոնք առաջ էին եկել Երևանի ապստամբ ուժերի ու մեծաթիվ գաղթականության նահանջի և Ջանգեզուրում հայտնվելու պատճառով: Խիստ ընկան երկրամասի պաշտպանների մարտունակությունը և բարոյական ոգին, սրվեցին տեղական և երևանյան ղեկավարների հարաբերությունները<sup>47</sup>:

Դեպի Ջանգեզուր գաղթի կործանարար հետևանքների մասին նմանատիպ կարծիք է հայտնել նաև Զովհ. Քաջազունին. «Հաշվի չէին առել, որ պարտված, կազմալուծված և նահանջի ճամփան բռնած խմբերը և մանավանդ սարսափահար ամբոխը կարող են առաջ բերել միայն լքում և հուսահատություն: Ակամայից շփոթ էինք մտցրել տեղական կյանքի մեջ: Ծագել է մի խուլ հակառակություն եկվոր և տեղական իշխանությունների միջև»<sup>48</sup>:

Պատմաբաններից ոմանք փետրվարյան ապստամբության բացասական հետևանքներից են համարում նաև Մոսկվայի պայմանագրի կաշկանդիչ պայմանները: Հայ, հիմնականում խորհրդահայ պատմագրության մեջ քննադատվում են նաև Ս. Վրացյանի՝ Խորհրդային Ռուսաստանին ուղղված հեռագրերը, որոնցում տեղեկացվում էր Հայաստանում խորհրդային իշխանության տապալման ու մոսկովյան բանակցություններում Խորհրդային Հայաստանի պատվիրակության մասնակցության անօրինակության մասին: Խորհրդային պատմաբան Ա. Հեյֆեցի կարծիքով Մոսկվայի բանակցություններին Ալ. Բեկզադյանը պետք է մասնակցեր, բայց Ս. Վրացյանի ուղարկած հեռագրի պատճառով հայկական պատվիրակությունը զրկվեց բանակցություններին մասնակցելու իրավունքից<sup>49</sup>:

Փաստորեն նույնն է կրկնում նաև խորհրդահայ պատմաբան Ա. Մնացականյանը՝ գտնելով, որ հենց կոնֆերանսի բացման օրը ստացվում է «սև գույժ»՝ ԶՓԿ-ի նախագահի հեռագիրը, որով հաղորդվում է, թե Հայաստանում հեղկոնը տապալվել է, և իշխանությունը անցել է Փրկության կոմիտեին, որը պաշտպանում է Ալեքսանդրապոլի դաշնագրի կետերը հայ-թուրքական սահմանների մասին, ուստի և Ալ. Բեկզադյանն իրավունք չունեի մասնակցելու կոնֆերանսին: Եվ հենց այս հեռագիրը զինեց թուրք դիվանագետներին և զինաթափ արեց հայ ժողովրդի շահերն արտահայտողներին<sup>50</sup>: Հայրենիքի փրկության կոմիտեի նման գործելակերպը պատմաբանը որակում է դավաճանություն:

Նմանատիպ կարծիք է արտահայտել Զր. Սիմոնյանը՝ գրելով, որ ի-

<sup>47</sup> Տե՛ս **Գ. Նժդեհ**, Ազատ Սիւնիք, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1925, օգոստոս, քիվ 10, էջ 136:

<sup>48</sup> **Ա. Հարությունյան**, Գ. Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը, Եր., 2001, էջ 65:

<sup>49</sup> Տե՛ս **Хейфец А.** Советская дипломатия и народы Востока (1921–1927). М., 1966, էջ 94:

<sup>50</sup> Տե՛ս **Ա. Մնացականյան**, Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, Եր., 1976, էջ 71:

րենց «խելահեղ քայլերով հայրենիքի փրկարարները նոր դժբախտություն բերեցին արյունաքամ երկրին, նոր հարված հասցրին նրա կենսական շահերին»<sup>51</sup>:

Սփյուռքահայ հեղինակ Շ. Նաթալին նույնպես խորհրդահայ պատմաբանների նման գտնում է, որ իբր Փետրվարյան ապստամբության և Վրացյանի հայտնի հեռագրի հետևանքով Չայաստանի պատվիրակության մասնակցությունը Մոսկվայի բանակցություններին խափանվեց<sup>52</sup>:

Իսկ ակադեմիկոս Գ. Գալոյանը նույնիսկ գտնում էր, որ փետրվարյան ապստամբությունը չէր կարող իր բացասական կնիքը չդնել թե՛ Լոնդոնի դաշնակցային խորհրդաժողովի և թե՛ Մոսկվայում այդ օրերին ընթացող ռուս-թուրքական բանակցությունների վրա, երբ շոշափվում էր Չայաստանի հարցը<sup>53</sup>:

Փաստերի վերլուծությամբ Գ. Գալոյանը հանգում է այն համոզման, որ փետրվարյան խռովությունը ծառայեց քեմալականների շահերին:

Վերադառնալով Ս. Վրացյանի ռադիո-հեռագրի ազդեցության հարցին՝ նշենք, որ նախ և առաջ այն Մոսկվա է ուղարկվել մարտի 12-ին (ըստ որոշ աղբյուրների՝ մարտի 14-ին<sup>54</sup>), իսկ այդ ժամանակ բանակցություններն արդեն եզրափակիչ փուլում էին: Մինչդեռ հայ պատվիրակների մասնակցությունը խորհրդաժողովին արգելված էր հենց սկզբից՝ փետրվարի 26-ից: Ուստի տրամաբանական չէ խորհրդահայ այն պատմաբանների տեսակետը, թե իբր մարտի 12-ին ուղարկված հեռագիրն էր Մոսկվայի պայմանագրի կաշկանդիչ պայմանների հիմնական պատճառը:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ այս հարցը լուսաբանվել է դեռևս խորհրդային շրջանում: Է. Չոհրաբյանը, զբաղվելով պատմական փաստերի ժամանակագրական ճշգրիտ քննությամբ, ցույց է տվել, որ Ս. Վրացյանի մարտի 12-ի ռադիո-հեռագիրը չէր կարող հետին թվով ազդել Չայաստանի պատվիրակության՝ փետրվարի 26-ից Մոսկվայի բանակցություններին չմասնակցելու հանգամանքի վրա<sup>55</sup>: Հետխորհրդային շրջանում գրված իր մեկ այլ աշխատության մեջ հեղինակը կրկին փաստարկված ցույց է տվել, որ հայկական պատվիրակության չմասնակցելը խորհրդաժողովին պայմանավորված չի եղել փետրվարյան դեպքերով, որովհետև խորհրդաժողովի բացման նախօրյակին թուրքական պատվիրակությունը իր կառավարությունից միացյալ կոնֆերանսին մասնակցելու լիազորություն դեռևս չէր ստացել<sup>56</sup>:

Ուստի խորհրդահայ պատմաբանների վերոնշյալ տեսակետները չեն դիմանում որևէ առողջ դատողության: Միանշանակ է՝ Ս. Վրացյանի ռադիո-

<sup>51</sup> **Հ. Սիմոնյան**, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1980, էջ 536:

<sup>52</sup> Տե՛ս **Շ. Նաթալի**, Երեք Դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի, Կարսի), Բաղդատական Ձուգակչիռ, Պեյրոթ, 1957, էջ 11:

<sup>53</sup> Տե՛ս **Գ. Գալոյան**, Չայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 439:

<sup>54</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 55:

<sup>55</sup> Տե՛ս **Է. Չոհրաբյան**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922 թթ.), Եր., 1979, էջ 213-214:

<sup>56</sup> Տե՛ս **Է. Չոհրաբյան**, Նախիջևանի հիմնահարցը (1920 թ. մայիս -1921 թ. հոկտեմբեր), Եր., 2010, էջ 294-295:

հեռագիրը ոչ մի էական ազդեցություն չի ունեցել ո՛չ հայկական պատվիրակության անդամների՝ խորհրդաժողովին չմասնակցելու և ո՛չ էլ պայմանագրի կաշկանդիչ պայմանների վրա:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերին Լեզրանը նամակ է ուղարկում Չիչերինին՝ զեկուցելով Հայաստանում տիրող իրավիճակի մասին: Անդրադառնալով այն հարցին, թե ինչ կտա խորհրդային Հայաստանին Մոսկվայում կայանալիք խորհրդաժողովը, Լեզրանը պարզաբանում է՝ քանի որ իրենց անհրաժեշտ է քեմալականների աջակցությունը, իրենք չեն կարող շատ սուր դնել Հայկական հարցը<sup>57</sup>: Ահա Մոսկվայի պայմանագրի կաշկանդիչ պայմանների հիմնական պատճառը. ակնհայտ է, որ դա ոչ մի առնչություն չունեն փետրվարյան ապստամբության և Ս. Վրացյանի՝ Մոսկվա հղած հեռագրերի հետ:

Խորհրդային Ռուսաստանը չէր կարող ազդել թուրքերի վրա այն պարզ պատճառով, որ վախենում էր, թե Թուրքիան կշրջվի դեպի Անտանտը, մասնավորապես՝ դեպի Անգլիան: 1920 թ. դեկտեմբերի 23-ին Չիչերինը նամակ է հղում Լենինին. «Եթե մենք վանենք թուրքերին, ապա նրանք կվազեն Անտանտի գիրկը, կբռնեն հակաբուլշևիկյան դիրք....., իսկ այդ պայմաններում մեզ դժվար կլինի պահել Բաքուն»<sup>58</sup>:

Բացի այդ, ինքը՝ Լենինը, պնդում էր, որ Ռուսաստանն այս պահին չի ցանկանում և չի էլ կարող կռվել թուրքերի դեմ հատկապես Կարսի համար, որը, ըստ նրա, թուրքական քաղաք է: Իսկ երբ Լենինին ներկայացնում են հայ ժողովրդի ողբերգական վիճակը, պնդում, որ նման գործելակերպը կարող է հանգեցնել հայ ժողովրդի աչքում կոմունիստական կուսակցության հեղինակության անկմանը, նա տալիս է հետևյալ պատասխանը. «Մենք ժամանակավորապես պետք է զոհաբերենք հայ ժողովրդի շահերը հանուն համաշխարհային հեղափոխության...»<sup>59</sup>:

**НАТЕЛЛА ГРИГОРЯН – Роль и значение февральского восстания.** – Захват большевистскими войсками Еревана 2 апреля 1921 г. ознаменовал поражение февральского восстания. Последствия восстания были как положительными, так и негативными, поэтому оно не поддаётся однозначной оценке.

Его последствиями в стране, и без того изнурённой революцией, стали новые разрушения, многочисленные людские жертвы и тысячи покинувших родину беженцев, и тем не менее, восстание вынудило советские власти осторожнее проводить свою политику в Армении. Получив горький урок, большевики в Москве и в Ереване стали более терпимы в отношении некоммунистических элементов советской Армении; прекратились насилия, откровенное недоверие к интеллигенции сменилось вниманием и попытками задобрить её. Словом, февральское восстание произвело на советскую власть отрезвляющее воздействие.

<sup>57</sup> Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий». Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов. Т. 2, ч. 1. М., 2003, էջ 329:

<sup>58</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, ք. 25:

<sup>59</sup> Armenia. Political and Ethnic Boundaries. 1878-1948. Anita L.P. Burdett. Archive Editins, 1998, p. 654-656.

**NATELLA GRIGORYAN – *The Role and Importance of the February Rebellion.* –**

With the capture of Yerevan by the Bolshevik troops on April 2, 1921, the February rebellion was defeated. The February uprising had both positive and negative effects, so it is difficult to assess it unequivocally.

It's clear that as a result of February rebellion in an extremely degraded country as it were, there were new destructions and a great deal of human victims, thousands of people left the country, nevertheless it forced the Soviet authorities to more carefully implement their policy in Armenia. In Moscow as well as in Yerevan the Bolshevik authorities learnt a bitter lesson, they began to pursue a policy of tolerance towards non-communist elements, stopped confiscation, the apparent distrust towards intellectuals was changed to kindness and care. Anyway, the February uprising had a sobering effect on the Soviet authorities.